ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
14.09.2020-ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը 16^{00} –ին, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Ալեք Մանուկյան 11) տեղի ունեցավ գիտական խորհրդի հերթական նիստը (այսուհետ՝ նիստ):
Նիստը նախագահում էր Գիտական խորհրդի նախագահ՝ Դավիթ Խիթարյանը, նիստին մասնակցում էին 34 անդամներից 29-ը:
(Մասնակիցների գրանցացուցակը կցվում է):
Նիստից բացակայում էին՝ Անի Բաղյանը, Դավիթ Սարգսյանը, Սաթենիկ Սիմոնյանը, Սոֆյա Առուշանյանը:
Ապահովված էր նիստի քվորումը:
Գիտական խորհրդի նախագահը անդամներին ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց այն հաստատել:
Օրակարգը դրվեց բաց քվեարկության
Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին նիստի օրակարգը:

Նիստն արձանագրեց իրավական ապահովման բաժնի իրավախորհրդատու՝ Վ. Ավագիմյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 14.09.2020թ–ի նիստի օրակարգի հաստատում.
2. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ և մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) և ներբուհական անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգի հաստատում

Զեկուցող՝ Իրավական ապահովման բաժնի ղեկավար՝ Օֆելյա Պետրոսյան

3. Ֆ.Գ.Ղազարյանի և Դ.Ս.Խիթարյանի «Մարդու մկանային ուժը, տարիքը, մարզման ազդեցությունը, մշակման մեթոդիկան» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը
Զեկուցող՝ Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ Հարություն Բաբայան

4. Ինստիտուտի աշխատակիցներ՝ Բորիս Զինավորի Սաղյանին, Արամ Աղվանի Գրիգորյանին, Գառնիկ Արամի Հակոբյանին, Սիմոն Մինասի Թորոսյանին, Վալերի Միերի Մամաջանյանին, Ռոզա Ֆիլիպի Պրուդնիկովային, Սիլվա Ռուբենի Հակոբյանին, Ռոբերտ Ասիլբեկի Գալստյանին գիտամանկավարժական աշխատանքի համար պարգևատրել Ինստիտուտի մեդալով:

Զեկուցող՝ Գիտահամակարգող խորհրդի նախագահ՝ Ֆ.Ղազարյան

5. Այլ հարցեր

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց՝ ռեկտորի պաշտոնակատար՝ Դավիթ Խիթարյանը և խոսքը փոխանցեց իրավական ապահովման բաժնի ղեկավար՝ Օֆելյա Պետրոսյանին, ով հայտնեց որ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ և մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) և ներբուհական անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգը արդեն իսկ ներկայացվել է կարծիքի և ընթացակարգի վերաբերյալ իրենց կարծիքներն են հայտնել Գագիկ Սարգսյանը, Սուրեն Դանիելյանը, Անի Մազմանյանը, Արմեն Հակոբյան, Ռուզաննա Մարտյանը, Տիգրան Սիմոնյանը, իսկ մյուս անդամները կարծիքներ չեն ներկայացրել հետևաբար ենթադրվում է, որ առարկություններ չունեն: Օ.Պետրոսյանը առաջարկեց հետագայում առաջարկություններ չունենալու դեպքում ևս կատարել համապատասխան գրառում /դիտողություններ և առաջարկություններ չունենք/ համոզվելու համար, որ փաստաթղթին ամբողջությամբ ծանոթացել են: Օ.Պետրոսյանի կողմից առաջարկվեց կատարել փոփոխություն 31–րդ կետի 6-րդ ենթակետում «հեռակա երեք և ավելի ուսանող ունեցող ընտանիքների» բառերը հանել քանի որ 10–րդ կետում արդեն իսկ նշված է ուստի խուսափելու համար կրկնությունից: Օ. Պետրոսյանը ներկայացրեց նաև որ գործող երկու համակարգ կա 100 տոկոս և 75 տոկոս փոխատուցման համակարգ այն ֆակուլտետների համար, որոնք պետական պատվերի համակարգից չեն օգտվում «Կինեզիոլոգիայի և լրագրություն» կարգի այդ գլուխը ուժի մեջ կմտնի հաջորդ ուսումնական տարվանից քանի որ դրա համար այլ երաշխիքներ և ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ: Ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյանը հարց բարձրացրեց 31–րդ կետի առաջին մասի հետ կապված սոցիալապես անապահով մինչև սահմանային շեմը, որը 28–ն է, բուհերի կողմից է կարգավորվում իսկ սահմանային շեմից բարձր կատարում է պետությունը և առաջարկեց հղում տալ կառավարության որոշմանը: Առաջարկի վերաբերյալ հնչեցին կարծիքներ և որոշվեց կարգի հետ միասին հղում տալ նաև կառավարության որոշմանը: Հնչեցին հարցեր նաև կապված կանոնակարգի 32–րդ կետի հետ և տրվեցին լիարժեք պատասխաններ:

Հարց հնչեց մարտական հերթապահության հետ և ստացան պատասխան որ կարգավորվում է 8-րդ կետով:

Օ.Պետրոսյանը ներկայացրեց, նաև որ զեղչի դիմումները հաջորդ ուսումնական տարվանից լինելու են միայն էլեկտրոնային տարբերակով, այսինքն ներդրվելու է զեղչի համակարգ և համակարգը կամ կընդունի կամ կմերժի դիմումը:

Խորհրդի ներկա անդամները միաձայն **որոշեցին** հաստատել կանոնակարգը համապատասխան փոփոխություններով:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ Հարություն Բաբայանը և մանրամասն անդրադարձ կատարեց Ֆ.Գ. Ղազարյանի և Դ.Ս.Խիթարյանի «Մարդու մկանային ուժը, տարիքը, մարզման ազդեցությունը, մշակման մեթոդիկան» մենագրությունը տպագրության երաշխավորելու անհրաժեշտության մասին և ելույթում մանրամասն ներկայացրեց մենագրության բովանդակությանը:

Խորհրդի անդամները միաձայն **որոշեցին՝** Ֆ.Գ.Ղազարյանի և Դ.Ս.Խիթարյանի «Մարդու մկանային ուժը, տարիքը, մարզման ազդեցությունը, մշակման մեթոդիկան» մենագրությունը երաշխավորել տպագրության**:**

4. **Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ** ելույթ ունեցավ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝ Դավիթ Խիթարյանը և խոսքը փոխանցեց գիտահամակարգող խորհրդի նախագահ՝ Ֆրունզ Ղազարյանին, ով ներկայացրեց Ինստիտուտի աշխատակիցներ՝ Բորիս Զինավորի Սաղյանի, Արամ Աղվանի Գրիգորյանի, Գառնիկ Արամի Հակոբյանի, Սիմոն Մինասի Թորոսյանի, Վալերի Միերի Մամաջանյանի, Ռոզա Ֆիլիպի Պրուդնիկովայի, Սիլվա Ռուբենի Հակոբյանի, Ռոբերտ Ասիլբեկի Գալստյանի թեկնածության վերաբերյալ մանրամասն քննարկել են խորհրդի նիստում և միաձայն հաստատել են նրանց թեկնածությունը և նրանց գիտամանկավարժական աշխատանքի համար պարգևատրել Ինստիտուտի մեդալով: Ելույթ ունեցավ նաև Դ.Խիթարյանը ով մասնավորապես անդրադարձավ Ռոբերտ Ասիլբեկի Գալստյանի թեկնածությանը ով 1989-1994 թթ–ին եղել է ինստիտուտի ռեկտորը:

Խորհրդի ներկա անդամները միաձայն **որոշեցին** Ինստիտուտի աշխատակիցներին պարգևատրել ինստիտուտի մեդալով**:**

Օրակարգի 5-րդ հարցը (Այլ հարցեր)՝ ներկայացրեց Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնի վարիչի ժ/պ Սուրեն Դանիելյանը և առաջարկեց Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնը անվանակոչել՝ Աղվան Աշոտի Չատինյանի անունով, քանի որ նա հանդիսանում է Ինստիտուտի հիմնադիրներից և շուրջ 60 տարի իր ներդրումն է ունեցել Ինստիտուտի կերտման գործում:

Խորհրդի ներկա անդամները միաձայն **որոշեցին** Ինստիտուտի Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնը անվանակոչել Աշոտ Չատինյանի անունով **:**

Օրակարգի 6-րդ հարցը (Այլ հարցեր)՝ ներկայացրեց առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի դեկան՝ Լուսինե Ստեփանյանը Արփինե Մուրադյանի հեղինակած «Կլինիկական պրակտիկա մանկական վերականգնողական կենտրոններում» ուսումնամեթոդական ձեռնարկը և առաջարկվեց երաշխավորել տպագրության: Խորհրդի անդամները միաձայն **որոշեցին** «Կլինիկական պրակտիկա մանկական վերականգնողական կենտրոններում» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Սույն արձանագրությունը կազմված է 14.09.2020թ-ին և բաղկացած է 4 էջից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ. ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ա.ՉԱՏԻՆՅԱՆ